ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 03 » նոյեմբերի 2021 թվականի N:326-Ч ք.Գյումրի

ԿԱՐԻՆԵ ԲԱԼԱԲԵԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Կարինե Բալաբեկյանի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Բալաբեկյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 9-ը ներառյալ:
2. Կարինե Բալաբեկյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության ռուսաց լեզվի ուսուցիչ Կարինե Հովսեփյանին:

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսկականի հետ միշտ է